# ԱՐՑԱԽ – ՍՅՈՒՆԻՔ

## ԱՐՑԱԽ (ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂ)

### 1. ԼՈՒՍ ՆԱՆ ՄԹԵՆ ԱՇԽԱՐՔՆԵՆ

*Մին մարթ, մինգյել մին կնեգյ ըն ինո՛ւմ, տաՀանց խոխա չի ինո՛ւմ։ ՏաՀանք գյո՛ւղո՛ւմ չըն, թա Հինչ անեն։ Էտ մարթը ըսկանում ա, թա մին Հեռու տըեղ մին պառավ կա, թիլիսիմներավ ամմեն Հինչ կարող ա անե, վըեր խոխա ինի։ Ըր ա կենում, քյինա՛մ էտ պըռավեն կոշտը։ Պառավը ուրուրուցեն տական իրեք խնձո՜ր ա տո՛ւս օնում, տամ էտ մարթին։ Խնձո՜րին մինը մըեծ ա ինո՛ւմ, մինը՝ մաշնակ, մինն էլ՝ կուճուր։ Պառավը խնձո՛ւրնեն տամ ա, Համ էլ ասում. «Վըեչ մինն էլ կըծես վուչ օտես, տաՀանք իրեքան էլ տղա յըն տըռնըլական»։*

*Էտ մարթը խնձո՛ւրնեն յոր ա օնում, Հըե ինո՛ւմ։ Հղեննի ամիննո՛ւմ չի՝ օղում ա գյիղա, թա վըեր խնձո՜րան կծե, Հինչ կինի։ Կուճուր խնձո՜րան մին խըեգյ կծում ա, օտում, մնացածը տինո՛ւմ ջուբումը։ Քյինա՛մ ա Հանում տոն։ Մին քանի ամըես վըեր անց ա կենում, էրկու խնձո՜րը էրկու սաղ տղա յըն տըեռնում, կեսատ խնձո՜րն էլ մին կեսատ, կըտըըղ տղա յա տըեռնում։*

*Էտ տղեքյը մըծանում ըն։ ՏաՀանց մին մըեծ, լա՛վ բաղ ա ինո՛ւմ։ Բաղեն խնձո՜րը միշտ պկասում ար։ Տղորանցը մըեծը քյինա՛մ ա, վըեր քշերը ղարաղուլ անե, տըեսնա խնձո՜րը Հո՞ւ վա քաղում տանում։ Քյինա՛մ ա բաղումը պըռանվում, կարում չի զա՛րթո՛ւն կենա, քոնը տանում ա։ Մաշնակն ա քյինա՛մ, էլլա կարում չի։ Կըտըըղը վըեր քյինա՛մ ա, մաննը կտրում ա, յիրա՛ն աղ ածում,*

հանցու քոնը տանն վուչ։ Քշերին կեսումը տըեսնում ա մին մըեծ օշափ նի մոտավ բաղը, մին մըեծ խնձորի ծառ պուկեց, շիլանկեց տարավ, քըերծեն ղաթավը նի մոտավ, մին գըեռ քար տիրըվ ղաթումը, էլ ուրվաց վուչ։ Տղան էտ վըեր տըեսնում ա, քյինըմ ա հորն ասում։ Հո՞րը տղորանցը նհետ քյինըմ ա էտ քարին կոշտը, քըերծեն ըռըխան քարը յոր ըն օնում, տըեսնում մին մըեծ վըեր։ Քյենդիր ըն պիրում, մըեծ տղեն անա կապում, վըերան կախ տամ։ Մըեծ տղան վըեր քյինըմ ա վըերեն տակեն հանում, սա՜ս ա անում, թա՝ վա՜յ, է՜րից, է՜րից։ Ծիքյ ըն տամ, տրան եռ տո՛ւա օնում։ Մաշնակն ըն քցո՛ւմ, էլլա թա՝ վա՜յ, է՜րից։ Ծիքյ ըն տամ, տրան էլ տո՛ւա օնում։ Կըտըրղն ասում ա, վըեր ինձ քյինդիրա՞ն կապեքյ քցեքյ վըերը, հենց վըեր եա ասեմ էրից, տո՛ւա շօնեքյ, պեց կըթողեքյ։ Կուճուր տղեն վըեր քցո՛ւմ ըն վըերը, ասում ա՝ է՜րից, է՜րից։ Քյենդիրը պեց ըն թողում։ Տա քյինըմ ա մին տան տառնը պեց անում, տըեսնում մին քսանօխտը կըլխանե օշափ քոն իլա՛ծ, քշտին էլ մին ղա՛շա՛նգյ ախճիգյ նստած, գյո՛ւլըմ յա անում։ Էտ ախճիգյը թա՝ ախպըեր, ախպըեր, եռ տըեռ քյինա՛, էս սհաթս քսանօխտը կըլխանե օշափը եր ա կըննական, քեզ ուտե։ Տղան թա՝ եա ուշափեն անա վախում չըմ, ասե տըեսնամ հի՞շտեղ ա նրա օժը։ Ախճիգյը թա էն ա էն ղոլի ութաղեն շո՛ւշին մաչին։ Տղան թխում ա շո՛ւշա՛ն կոտրում, ցրև տամ։ Օշափը ճըռմկուտալավ եր ա կեննում, աչկերը պենո՛ւմ, թա՝ էս ա մին քանի օր ա մարթու մըեա չի կեռքես տակն ինգյա՛լ. ըստեղաս մըրթավըեռ ա կյամ, էր կեննամ ըպպանեմ, ուտեմ։ Էտ տղեն ծըեռքեն մին կոպալ ա ինո՛ւմ, պտոկը ծանդր արկաթ կոխած։ Օշափը վըեր էտ խոսկն ասում ա, տղան կուպալավը կըլխեն մեհետ թխում ա. օշափն ըստակում ա։

Տրանա եռը խիլլա՛ տեղ վըեր քյինըմ ա, մին տան մղակ էլ ա պեց անում, տըեսնում երեսունօխտը կըլխանե մին օշափ քոն իլա՛ծ, քշտին էլլա ինդի մին ղա՛շա՛նգյ ախճիգյ նստած, գյո՛ւլըմ ընելիս։ Էտ ախճիգյը տղեն թա ճեկ ըրա փախե, էս սհաթս երեսունօխտը կլխանե օշափը եր ա կըննական, քեզ ուտե։ Տղան թա՝ եա ուշափեն անա վախում չըմ, մինչա՛ ասե տըեսնամ նրա օժը հի՞շտեղ ա։ Ախճիգյը թա՝ էն ա շո՛ւշին մաչին, կոխկե ութաղումը տիրա՛ծ։ Տղան թխում ա էտ շո՛ւշա՛ն կոտրում, օշափը ղո՛ւրթնա՛նո՛ւմ ա, թա՝ էս հինչ լա՛վ պեն ա, մին քանի օր ա վըեր մարթու մըեա չի ինգյա՛լ կեռքես տակը, տու լիհա՛ քու վըեննավըռ ըս էկալ, էս սհաթս եր կեննամ քեզ ուտեմ։ Վըեր տի յա ասում, տղան կուպալավը թխում ա ուշափեն ըպպանում։ Խիլլա՛ տեղ տղան քյինամ

ա, մին տան մղակ պեց անում, երում, տըեսնում քառասունօխտը կըլխանե մին օչափ քոն իլյած, մին շատ ղո̈շո̈նգյ ախճիգյ էլ կոխկեն նստած, գյո̈ւլրո̈ ընիլիս։ Ախճիգյը տղեն թա՝ ճելլ ըրա փախե, էս ահաթս քառասունօխտը կըլխանե օչափը եր ա կըննական, քեզ ուտե։ Տղան թա՝ ես ուչափեն անս վախում չըմ, տու ինձ սաե, տըեսնամ նրա օժը հի՞շտեղ ա։ Ախճիգյը թա՝ էն ա կոխկե ութաղումը մին շո̈նչո̈ կա, նրա մաշին ա։ Տղան նի յա մննում կոխկե օթաղը, թխում շո̈նչո̈ն կտրում, օչափը զո̈ւրթնո̈նո̈ւմ ա, թա տղեն մուտանա ուտե, տղան կլխեն թխում ա, ըսպանում։ Տրանա ետը իրեք ուշըփներեն վըրակեղանը, ապրանքը լոխ հվաքում ա վըրերեն առաչը, ըխճըկորանցն էլ նհետը տանում։ Քյեննդիրը տիյերո̈ն քցո̈ւմ ըն, լոխ կպտում ա, ծիքյ ըն տամ, պիցըրցընում։ Էրկու ըխճըկորանցն էլ վըրեր տո̈ւս ըն օնում, մնամ ըն ինքյն ան քառասունօխտը կըլխանե ուչափեն քշտի ախճիգյը, վըրեր ամմենակուճուրն ու ամմենղո̈շո̈նգյն ա ինում։ Ախպըրերքը տիյերո̈ն ծեն ըն տամ, թա ծըղանա մենակ մին հոքի յընք տո̈ւս ուննական, հու օղում ա, թող կյո̈։ Ախճիգյը տղեն ա ասում տու տո̈ւս եք, տղան՝ ըխճըկանը։ Վերչը, տղան ըխճըկանը վըրեր շատ ասում ա տու տո̈ւս եք, ախճիգյը թա՝ լո̈վ, ես տո̈ւս կըկյամ, տու կըքյինո̈ս էսհինչ տըեղը մին ախպո̈ւր կա, մին սև էծ, մինգյել մին սիպտակ էծ միշտ կյամ ըն էտ ըխպըրո̈ն ճո̈ւր խմում, լոք կըտաս եր ինիս էտ սիպտակ էծին մաշկեն նստես, քեզ տո̈ւս ա ուննական լո̈ւս ախշարքը, իսկ վըրեր չիլ ինգյիր սև էծին մաշկեն նըստեցեր, տո̈ւս ա ուննական ավելի մթեն ախշարք։

Ըխճըկանը քյինդիրո̈ն կապում ա, ծիքյ ըն տամ տո̈ւս օնում, ինքյը քյինո̈մ ա էտ ըխպըրին կոչտը, լոք տամ եր ինո̈ւմ սիպտակ էծին մաշկեն նստում, սև էծը կյամ ա տրան հարու տամ, վըրեր քցո̈ւմ։

Տղան քյինո̈մ ա մին պռավու տոն նի մննում, ճո̈ւր օղում։ Պառավը ղրաղ տըեղ կյո̈ւզո̈ւմ ա, պիրո̈ւմ տամ տղեն։ Տղան խմում ա, հըցընում, թա ծըեր քըղաքումը ճո̈ւր չի՞ կա։ Պառավը թա՝ ըխպիրին աչկը մին օչափ կապալ ա, ամմեն օր մին ախճիգյ ա տանում, վըրեր մին խըրեգյ ճո̈ւր ա տամ։ Սօր թաքավըրերեն ըխճըկանը հերթն ա։

Տղան քյինո̈մ ա տո̈ւս կյամ ըխպիրին կոչտը, տըեսնում թաքավըրերեն ախճիգյը լի՛հո̈ օղում ըն թա տան ուշափեն։ Ուշափեն մուտանում ա, ասում՝ պատառ ինդի կայ։ Օչափը թա՝ տու հու վը՞ս, հինչ ը՞ս, հի՞նչ իլիթ-միլլաթ ըս, վըրեր ռիսկ ըս անում ինձ

ասում՝ պատառ ինձի կաց։ Տղան ծըեռքըն կռպալավը ուշափին կըլխին թխում ա, օշափն ճռնճվ փլալվում ա, վըեր ինգյում, հոքին փչում։ Թաքավըերըն ախճիգյը ծըեռքը կոխում ա ճռնին մաղը, տղեն հալավը պիցըրցընում, դուլվըն ծըեռքավը թխում, ծըեռքըն հետը թողում յիրան։

Խաքարը հանում ա թաքավըերըն, թա՝ ուշափին ըսպանալ ըն, ըխճըկանըտ ըղադալ։ Թաքավըերը վըեր հըցընում ա, թա հո՞ւ վա ուշափին ըսպանալ, շատ ջահիլ տղեքյ ըն քյինձմ ասում՝ ես ըմ ըսպանալ, ըխճըկանըտ էլ ըղադալ։ էլ կարում չըն գյիդան, թա ուշափին ըսպանողն ու թաքավըերըն ըխճըկանը ըղադողը հու վա իլալ։ Ախճիգյը լոխճին ջարգյավ վըենն ա կըցընում, հըըրվնեն պիցիրցընիլավ քյինձմ էտ տղեն քթնում, ծեն տամ, թա՝ ա՛պա, հասէ՛ ինձ ըղադողը։ Հարը էտ տղեն հըցընում ա, թա քեզ հի՞նչ լիվոթուն անեմ, վըեր տու իմ ըխճըկանըն ըղադալ ըս։ Տա թա՝ վըէչ մին պեն օզում չըմ, մենակ ինձ տո՛ւս կալեքյ լո՛ւս ախշարքը։ Թաքավըերըն ասում ա էն ա էսհինչ տըեղը մին զո՛ւմըո՛ւրո՛ւտ ղուշ կա, տըրա ճոտերը ամմեն տարի մին օց կյամ ա ուտում, վըեր տու կարես էտ օցեն ըսպանես, ճոտըերըն ըղադես, էտ ղուշը քեզ տո՛ւս կօնե լո՛ւս ախշարքը։

Տղան հըե յա ինում քյինձմ էտ տըեղը, տըեսնում օցը նոր ա ծառավը պիցիրմացալ, օզում ա լըհա ղուշին պո՛ւնան մոտանա, ծըեռքէն կռպալավը թխում ա, օցեն ըսպանում, վըեր քցում։ Ղուշն էլ վըեր քյեցալ ար մին ճըղըցաքար պերալ, թա օցեն յիրա վըեր քցի ըսպանե, տղեն վըեր տըեսնում ա, օզում ա թա տըրա կըլխեն քցի, ճոտերը պո՛ւնան կըլխըննեն պիցըրցընում ըն, թա՝ մա՛մա, մա՛մա, տա յա մըեզ ըղադալ։ Ղուշը քարն էն ղոլին վըեր ա քցում, տղեն թա՝ քեզ հի՞նչ լիվոթուն անեմ, վըեր իմ ճոտերես օցեն ըլխան ըղադալ ըս։ Տղան թա՝ քըղանա վըեչ մին պեն չըմ օզում, լըհա ինձ տո՛ւս կալ լո՛ւս ախշարք։ Էտ զո՛ւմըո՛ւրո՛ւտ ղուշը թա՝ քյինա օխտը վըխճարու տիմակ, մինգյէլ օխտը յոխա եր կալ, թըվըերես ղաթումը նըստե, վըերըդեղ ծըկըլթամ, ընդեղ մին վըխճարեն տիմակը նան յոխան կըքըրցիս պերանս։

Տղան քյինձմ ա օխտը վըեխճար ինքյ օնում, մըթոտել տամ, տիմըկնեն յոր օնում, օխտը յոխա եւ թխել տամ, տիմըկներեն նհետ տինում հիյթումը, կյամ ղուշին կոշտը։ Ղուշը տըրան ծո՛ւրան թըվերեն ղաթումը լավ տըղվարում ա, ետնան էլ ասում՝ պըենդ կաց, վախես վուշ։ Շատ էրկան տըեղ վըեր թռչում ըն անց կենում, հենգյ տիմակն ան հենգյ յոխան տամ ա ղուշին, էրկու տիմակը

նան էրկու յոխան հիյրավը ծըեռքան վըէր ա քցո՛ւմ։ Ղուշը վըեր էլլա յա ծըկըլթամ, տա ի՛րա՛ն բուդան կտրում ա, քցո՛ւմ պերա՛նը։ Ղուշը լո՛ւզվին տակեն էրկու բուդն էլ պահում ա, վըեր քըշանում ըն, ասում ա՝ հըսենքյ, եր կաց։ Տղան թա՝ վըեննըս տըմբըրալ ա, կարում չըմ։ Ղուշը լո՛ւզվին տական տղեն մըեռը տո՛ւս ա օնում, տինո՛ւմ կտրած տըեղը, ի՛րա՛ն թեփռան մինը պոկում, քսո՛ւմ, տղան լո՛ւվանում ա, եր կենում։ Ղուշը տըեղատ ետ ա տըեռնում, տղան էլ թյինա՛մ ա ի՛րա՛ն ախպորցն ըսպանում, կուճուր ըխճըկանը նհետ փըսակվում, հորը տանը-տըեղեն տըրըոթուն անում։